Հայտարարություն

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի

անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում

Սույնով տեղակացնում ենք, որ 2016 թվականի նոյեմբերի 28-ին «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է իրականացնել 3 տարի մարման ժամկետ ունեցող անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:
Պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առաջնային տեղաբաշխման հարթակում:
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հանդես է գալիս որպես տեղաբաշխող:

Ներդրողների ծանուցման էլեկտրոնային տարբերակը տեղադրված է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայք էջերում, համապատասխանաբար՝ www.nmc.am և www.armswissbank.am հասցեներով:

Թողարկման հիմնական պայմանները ներկայացված են ստորև.

Պարտատոմսերի դասը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերերի շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի տեղաբաշխման եղանակը	Չերաշխավորված
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	361,600 (երեք հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր) հատ
Թողարկման ընդհանուր ծավալը	3,616,000,000 (երեք միլիարդ վեց հարյուր տասնվեց միլիոն) ՀՀ դրամ
Աճուրդի ժամանակ տեղաբաշխման ենթակա ծավալ/անվանական	3,254,400,000 (երեք միլիարդ երկու հարյուր հիսունչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ
Շուկա ստեղծողի կողմից աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով ձեռք բերվող ծավալ/անվանական	361,600,000 (երեք հարյուր վաթսունմեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեկտրոն	10.00 (տաս) % տոկոս
Արժեկտրոնի վճարման	Կիսամյակային

պարբերականություն	
Տեղաբաշխման օրը	28.11.2016թ.
Տեղաբաշխման սկիզբը	28.11.2016թ. ժամը 11:00
Տեղաբաշխման ավարտը	28.11.2016թ. ժամը 13:30
Մարման օրը	28.11.2019թ.
Պարտատոմսերի արժեկտրոնի կուտակման բանաձև	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$, որտեղ AI - կուտակված տոկոս, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում): Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրից,
Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև	$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ Որտեղ, DP- Պարտատոմսի գինն է, DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C- տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց y- թողարկման պահին մինչև մարում եկամտաբերություն:

Պարտատոմսերի պոտենցիալ գնորդների նկատմամբ սահմանափակումներ չկան:
Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցել ցանկացողները կարող են դիմել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող ընկերություններին, որոնց ցանկն ու կոնտակտային տվյալները ներկայացված են http://nasdaqomx.am/am/members.htm ինտերնետային հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ՝ (+374 60) 757 001,
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ՝ (+374 10) 560 741: